Հայաստանի Հանրապետություն

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ «Ջրային կոմիտե»

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ № ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1-1

# ԱՐՁՆԻ-ՇԱՄԻՐԱՄ 2-ՐԴ ՀԵՐԹԻ ՋՐԱՆՑՔԻ ՆՇ369+30 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԱՐՈՒՃԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՋՐԸՆԴՈՒՆԻՉ ԱՎԱԶԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 10հազ.խմ. ԾԱՎԱԼՈՎ ՕԿՋ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ



## ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

### ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

MODUL

ԵՐԵՎԱՆ 2023

Պատվիրատու՝ «ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ»

Խորհրդատու՝ «ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ

Նախագծային աշխատանքների պայմանագիր № ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1-1

«ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԱՎԵԼՑՈՒԿԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԱՆՀԱՐԿԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ»

# ԱՐԶՆԻ-ՇԱՄԻՐԱՄ 2-ՐԴ ՀԵՐԹԻ ՋՐԱՆՑՔԻ ՆՇ369+30 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԱՐՈՒՃԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՋՐԸՆԴՈՒՆԻՉ ԱՎԱԶԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 10հազ.խմ. ԾԱՎԱԼՈՎ ՕԿՋ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

# ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ


«Մոդուլ» ՍՊԸ գործադիր տնօրեն Վ. Վ. Վարդանյան

Նախագծի ղեկավար տ.գ.թ., դոցենտ Հ. Կ. Պողոսյան


ԵՐԵՎԱՆ 2023

# ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

ԳԻՐՔ 1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ

ԳԻՐՔ 2. ԳԾԱԳՐԵՐ

ԳԻՐՔ 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ԳԻՐՔ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ՝

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | |
|---|---|---|
| 1 | Առաջադրանքի պայմաններ | 30էջ |
| 2 | Նախագծման թույլտվություն №394 առ 10.11.2022թ. (Ճարտարա-պետա-հատակագծային առաջադրանք) տրված Արագածոտնի մարզի Աշտարակ խոշորացված համայնքի կողմից | 4էջ |
| 3 | Թերությունների փաստագրման արձանագրություն | 3էջ |
| 4 | «Արագածոտն» ՋՕԸ կողմից տրված №336 առ 06.10.2022թ. գրություն /կից՝ հիմնանորոգման ենթակա ջրամբարի հիմնական ցուցանիշները՝ փաստացի մշակվող մշակաբույսերի զբաղեցրած տարածքների, ստացվող բերքի վերաբերյալ և սխեմա/ | 3էջ |
| 5 | Նամակ №238 առ 18.01.2023թ. Աշտարակ համայնքի ղեկավարի կողմից շինարարական աղբի և փափուկ գրունտի տեղափոխման վայրի և հեռավորության վերաբերյալ | 1էջ |
| 6 | Նախագծային լուծումների համաձայնեցման ակտ՝ Աշտարակի համայնքապետարանում 23.12.2022թ. կայացած «Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի ՆԿ369+30 հատվածում գտնվող՝ Արուճի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 10 հազ.խմ. ծավալով ՕԿՋ հիմնանորոգման» օբյեկտի հանրային լսումների | 2էջ |
| 7 | Նամակ №Դ.Գ.1537 առ 24.03.2023թ. ՀԷՑ կողմից համապատասխան տեղեկատվության տրամադրման վերաբերյալ | 1էջ |
| 8 | Նամակ № 492./Գ.Շ. առ 22.03.2023թ. ՀՀ զինվորական ուժերի գլխավոր շտաբի կողմից պայթյունավտանգ առարկաների առկայության վերաբերյալ | 1էջ |
| 9 | Նամակ №83 առ 14.03.2023թ. <<Հումանիտար ականազերծման և փորձագիտականկենտրոն> ՊՈԱԿ-ի կողմից պայթյունավտանգ առարկաների առկայության վերաբերյալ | 2էջ |
| 10 | Նամակ №349 առ 16.03.2023թ. <Յուքոմ> ՓԲԸ-ն ենթակառուցվածքների առկայության վերաբերյալ | 1էջ |
| 11 | Նամակ №ՄՇ/7031 առ 17.03.2023թ. <Վեոլիա Ջուր> ՓԲ Ընկերության կողմից սպասարկվող ջրամատակարարման և ջրահեռացման կոմունիկացիաների առկայության վերաբերյալ | 1էջ |
| 12 | Նամակ №MH/L230210/1.0/AA առ 27.03.2023թ. <ՄՏՍ Հայաստան> ՓԲԸ-ն ենթակառուցվածքների առկայության վերաբերյալ | 1էջ |
| 13 | Նամակ №372/23-11 առ 22.03.2023թ. <ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ> ՓԲԸ կողմից սպասարկվող կոմունիկացիաների առկայության վերաբերյալ | 2էջ |
| 14 | Ջրային կոմիտեի կարիքների համար՝<br>Աշխատանքների կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների և լիցենզիաների, կիրառվող նյութերի, կոնստ-րուկցիաների և շինարարական աշխատանքների նվազագույն երաշխիքային ժամկետների, պահանջվող տեխնիկական միջոցների, հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկ | 6 էջ |
| 15 | ԱԾՅ-ի հոդվածների և գծագրերում բերված ծավալների համապատասխանության ցուցակ | 10էջ |

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Ոռոգման համակարգերում ավելցուկային ջրերի անհարկի կորուստների կանխմանն ուղղված միջոցառումների ծրագիր»

«Հայաստանի Հանրապետության մարզերում ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում թվով 31 օրվա կարգավորման ջրավազանների առաջնահերթ կառուցում և վերակառուցում» Մանրամասն նախագծի մշակում

**Բովանդակություն**


1.ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ........ 5

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ........ 9

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ........ 10

3.1. Նկարագիրը և առաջադրանքը. ........ 10

3.2. Առաջադրանքի շրջանակները ........ 10

3.3. ՓՈՒԼ I. Ծրագրի տեխնիկա-տնտեսական հիմնավորում, նախնական նախագծի ........ 12

կազմում ........ 12

3.3.1. Ճարտարագիտական հետազոտություններ ........ 12

3.3.2. Բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություններ, ելակետային տվյալների հավաք, վերլուծություն և գնահատում ........ 14

3.3.3. Հողի ձեռքբերում և վերաբնակեցում ........ 15

3.3.4. Տնտեսական վերլուծություն ........ 16

3.3.5. I Փուլի ավարտը և ներկայացվելիք նյութերը ........ 16

3.4. ՓՈՒԼ II. Մանրամասն նախագծային փաթեթի մշակում ........ 17

3.4.1. Գծագրեր ........ 19

3.4.2. Տեխնիկական մասնագրեր ........ 19

3.4.3. Աշխատանքների ծավալների ցուցակ և շինարարական աշխատանքների պլանավորում ........ 20

3.4.4. Ճարտարագիտական նախահաշիվների պատրաստում ........ 20

3.4.5. Նախագծի բնապահպանական փորձաքննություն ........ 21

3.4.6. Հողի ձեռքբերում և վերաբնակեցում (ըստ անհրաժեշտության) ........ 21

3.4.7. Ընդհանուր հավելվածներ ........ 23

3.4.8. II փուլի ավարտը և ներկայացվելիք նյութերը ........ 23

3.5. ՓՈՒԼ III. Հեղինակային հսկողություն. ........ 24

4. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ........ 25

5. ԽՈՐՀՐԴԱՏՈՒ/ՆԵՐԻՆ ԿԱՐՃ ՑՈՒՑԱԿ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ........ 27

6. ԹԻՄԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ........ 28

7. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԸ ........ 29

**Հապավումներ**

| | |
|---|---|
| Պատվիրատու | Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտե |
| ԲԳ | Բնապահպանական գնահատում |
| ՋՕԸ | Ջրօգտագործողների ընկերություն |
| ՇՄՍԱԳ | Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում |
| ԲՍՍ | Բնապահպանական և սոցիալական ստանդարտներ |
| ԲՍԿՊ | Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան |
| ՄՊ | Մոնիտորինգի պլան |
| ՕԿՋ | Օրվա կարգավորման ջրավազան |
| ԱՏՀ - GIS | Աշխարհագրական տեղեկատվական համակարգ |
| ՀՀԿ | Հայաստանի Հանրապետության կառավարություն |
| ՇևՊ | Շահագործում և պահպանում |
| ՇԸ | Շահագործող Ընկերություն |
| ԱՊ | Առաջադրանքի պայմաններ |
| ՆԳՀ | Նախնական գնահատման հայտ |
| ՀՏԶՀ | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |

## 1.ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդառաջել է՝ ֆինանսավորելու Ոռոգման համակարգերում և գլխամասային հանգույցներում պահանջվող ծավալի ջրի կուտակման, ինչպես նաև ավելցուկային ջրերի անհարկի կորուստների կանխմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: «Հայաստանի Հանրապետության կառավարությունը հատկացրել է անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, որոնք օգտագործվելու են Հայաստանի Հանրապետության մարզերում ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում թվով 31 օրվա կարգավորման ջրավազանների առաջնահերթ կառուցում և վերակառուցում» աշխատանքների իրականացման մանրամասն նախագծի մշակումը ֆինանսավորելու համար: Հաշվի առնելով ոռոգման ջրի սակավությունը, ինչպես նաև դրա նկատմամբ պահանջարկի աճի միտումները, ներդրումները նախատեսված են ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքների ոռոգման համակարգերում և գլխամասային հանգույցներում պահանջվող ծավալի ջրի կուտակման, ինչպես նաև ավելցուկային ջրերի անհարկի կորուստների կանխման համար:

Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան մեկ երրորդը ներգրավված է գյուղատնտեսության մեջ, որով պայմանավորված է հանրապետության ՀՆԱ-ի շուրջ 25%-ը: Գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը ստացվում է ոռոգման միջոցով, որն անգերագնահատելի դեր ունի բարձր բերքատվության ապահովման համար:

Ծրագրի նպատակն է ապահովել սակավ ոռոգման ջրի կայուն և արդյունավետ օգտագործումը՝ խթանելով գյուղատնտեսության զարգացմանը, ինչպես նաև նվազեցնելով թիրախային խմբի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների ազդեցության հանդեպ: Ծրագրի իրականացումը զգալի դրական ազդեցություն կունենա տարածաշրջանի ջրային ռեսուրսների կայուն և բնապահպանական տեսանկյունից կառավարման արդյունավետության վրա, կխթանի գյուղական շրջանների զարգացումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

Ծրագիրը հիմնականում ներառելու է հետևյալ ջրօգտագործողների ընկերությունների կողմից շահագործվող և սպասարկվող ոռոգման համակարգերն ըստ շինարարական աշխատանքների իրականացման փուլերի.

<Շիրակ> ՋՕԸ (2 ՕԿՋ)

Շիրակի ջրանցքի (Կառնուտի ջրամբարից դոտացիայով) Բ – 26 բաժանարարի վրա Ազատան համայնքի տարածքում 80 – 100 հազ․ խմ ծավալով ՕԿՋ կառուցում
Աջափնյա ջրանցքի վրա Հայկավան համայնքի տարածքում 40 – 50 հազ․ խմ ծավալով ՕԿՋ կառուցում

<Եղեգնաձոր> ՋՕԸ (4 ՕԿՋ)

Խաչիկի 2-րդ աստիճանի պոմպակայանի ՕԿՋ (նորոգում, բետոնային սալերի կցվածքների նորոգում, բետոնային մասնակի աշխատանքներ) 1,3 հազ․ խմ ծավալով ՕԿՋ վերակառուցում
Ելփինի պոմպակայանի ՕԿՋ՝ 0,9 հազ․ խմ ծավալով (հողային հիմքով, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիոն էկրանով, կավային շերտով, քարային լիցքով) ջրավազանի կառուցում
Կեչուտի ջրատարի Արին-Մալիշկա-Վայք ՕԿՋ՝ 8 հազ․ խմ ծավալով (հողային հիմքով, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիոն էկրանով, կավային շերտով, քարային լիցքով) ջրավազանի կառուցում
Կեչուտի ջրատարի Փոռի ջրթափ ավազանի ՕԿՋ՝ 10 հազ․ խմ ծավալով (հողային հիմքով, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիոն էկրանով, կավային շերտով, քարային լիցքով) ջրավազանի կառուցում

<Թալին> ՋՕԸ (1 ՕԿՋ)

Թալինի 3-րդ հերթի ջրանցքի վերջնամասում Դաշտադեմի պոմպակայանի ջրի ծավալն ապահովելու համար ջրընդունիչ ավազանի մեծացում մինչև 7 հազ․ խմ ծավալով

<Սյունիք> ՋՕԸ (1 ՕԿՋ)

Մեղրիի ինքնահոս ջրատարի աջ ճյուղի վերջնամասում Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ գյուղի տարածքում 5-7 հազ․ խմ ծավալով ՕԿՋ և ՕԿՋ-ից աջ ճյուղ ջրանցք ուղղորդվող 200 մմ տրամագծի, շուրջ 300 մ երկարությամբ խողովակաշարի կառուցում

<Արագածոտն> ՋՕԸ (3 ՕԿՋ)

Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի վերջնամասում գտնվող՝ Ներքին Բազմաբերդի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 24 հազ․ խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգում
Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի ն2 369+30 հատվածում գտնվող՝ Արուճի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 10 հազ․ խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգում
Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի ն2 29+90 հատվածում գտնվող՝ Մուղնու՝ 25 հազ․ խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգում

<Տավուշ> ՋՕԸ (2 ՕԿՋ)
Դովեղի պոմպակայանի դոտացիոն ՕԿՋ-ի, հողային պատվարով, 3,5 հազ․ խմ ծավալով վերակառուցում
Ոսկեպար-Բաղանիս-Ոսկեվան-Կոթի ինքնահոս ջրագծի վրա՝ Բաղանիս-Ոսկեվան N2 նախկին պոմպակայանի տարածքում, հողային պատվարով, 5 հազ․ խմ ծավալով ՕԿՋ կառուցում

<Գեղարքունիք> ՋՕԸ (6 ՕՎՋ)

Ծովինար (Կարսներ) Մեծ առվի վրա, բնական թասի օգտագործմամբ և հողային պատվարով մինչև 20 հազ. խմ ծավալով ՕՎՋ կառուցում
Զոլաքարի Ներքին առվի վրա գտնվող 20 հազ. խմ ծավալով ՕՎՋ վերակառուցում
Ծովասար համայնքին հարող տարածքում, բնական թասի օգտագործմամբ և հողային պատվարով մինչև 20 հազ. խմ ծավալով ՕՎՋ կառուցում
Վաղաշենի ջրամբարում հակաֆիլտրացիոն միջոցառումների իրականացում, ՕՎՋ-ում կուտակված ջուրը համայնքի հողատարածքները սպասարկող Մանասի առու տեղափոխելու համար՝ 400 մմ տրամագծով, 300 գծմ երկարությամբ պոլիէթիլային խողովակներով դոտացիոն ջրագծի կառուցում
Ջրվեժի առու ջրանցքի գլխամասում շուրջ 10 հազ. խմ ծավալով ՕՎՋ կառուցում
Սարուխանի Շահենի աղբյուրի վրա շուրջ 10 հազ. խմ ծավալով ՕՎՋ կառուցում

<Լոռի> ՋՕԸ (4 ՕՎՋ)

Լոռու մայր ջրանցքի ՆՇ 470+00 հատվածում բնական թասի օգտագործմամբ, հողային պատվարով, մինչև 50 հազ. խմ ծավալով ՕՎՋ կառուցում
Սպիտակի աջափնյա պոմպակայանի՝ 240 հազ. խմ ծավալով ՕՎՋ նորոգում (ՕՎՋ-ի հունի մաքրում, բետոնային սալերի փոխարինում)
Խնկոյանի պոմպակայանի՝ 260 հազ. խմ ծավալով ՕՎՋ հիմնանորոգում (ՕՎՋ-ի հողային պատվարի և ջրհեռի նորոգում, բետոնային սալերի փոխարինում)
Ջրաշենի պոմպակայանի՝ 3 հազ. խմ ծավալով ՕՎՋ նորոգում (բետոնային սալերի փոխարինում)

<Գեղարքունիք> ՋՕԸ (2 ՕՎՋ)

Մանասի առու ջրանցքի գլխամասում բնական թասի օգտագործմամբ 150 հազ. խմ ծավալով ՕՎՋ կառուցում
Դդմաշեն և Ջովաբեր համայնքների <Խնձորներ> կոչվող տարածքում բնական թասի օգտագործմամբ, հողային պատվարով, 50 հազ. խմ ծավալով ՕՎՋ կառուցում, պայմանով, որ ՕՎՋ-ի հողային պատվարի հիմքն ու մարմինը նախատեսվի և կառուցվի այնպես, որ հետագայում 1,8 մլն խմ ծավալով ջրամբարի հողային պատվարի շինարարությունն իրականացվի՝ ՕՎՋ-ի պատվարը բարձրացնելու եղանակով

<Արարատ> ՋՕԸ (4 ՕՎՋ)
Արմաշի պոմպակայանի 3-րդ գոտու ՕՎՋ նորոգում, 60 հազ. խմ ծավալով ՕՎՋ կառուցում
Արմաշի պոմպակայանի 4-րդ գոտու ՕՎՋ, հողային պատվար, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիա, ծավալը կարող է որոշվել տնտեսական նպատակահարմարությունից ելնելով, ՕՎՋ վերակառուցում
Զանգակատուն-Պարույր Սևակ ինքնահոս ջրագծի վրա մինչև 100 հազ. խմ ծավալով (հողային պատվար, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիա) ՕՎՋ կառուցում

Արազափի 1 պոմպակայանի՝ շուրջ 20 հազ. խմ ծավալով ՕԿՋ նորոգում (բետոնային սալերի փոխարինում)

<Կոտայք> ՋՕԸ (1 ՕԿՋ)

Գողթ համայնքի տարածքում շուրջ 20 հազ. խմ ծավալով կիսակառույց ՕԿՋ-ի վերակառուցում

<Երևան> ՋՕԸ (1 ՕԿՋ)

Նորքի ջրանցքի պկ 87+00 հատվածում բազալտի հանքի թասում շուրջ 10 հազ. խմ ծավալով ՕԿՋ կառուցում

Սույն առաջադրանքի պայմաններով նախատեսված աշխատանքները խմբավորվում են թվով 4 Լոտերում՝ համաձայն ստորև աղյուսակի.

| N | <u>Լոտ 2 (12 ՕԿՋ)</u> | ՋՕԸ-ի անվանում |
|---|---|---|
| 1. | Լոռու մայր ջրանցքի նշ 470+00 հատվածում բնական թասի օգտագործմամբ, հողային պատվարով, մինչև 50 հազ. խմ ծավալով ՕԿՋ կառուցում | <Լոռի> ՋՕԸ (4 ՕԿՋ) |
| 2. | Սպիտակի աջափնյա պոմպակայանի՝ 240 հազ. խմ ծավալով ՕԿՋ նորոգում (ՕԿՋ-ի հունի մաքրում, բետոնային սալերի փոխարինում) | |
| 3. | Խնկոյանի պոմպակայանի՝ 260 հազ. խմ ծավալով ՕԿՋ հիմնանորոգում (ՕԿՋ-ի հողային պատվարի և ջրհեռի նորոգում, բետոնային սալերի փոխարինում) | |
| 4. | Ջրաշենի պոմպակայանի՝ 3 հազ. խմ ծավալով ՕԿՋ նորոգում (բետոնային սալերի փոխարինում) | |
| 5. | Դովեղի պոմպակայանի դոտացիոն ՕԿՋ-ի, հողային պատվարով, 3,5 հազ. խմ ծավալով վերակառուցում | <Տավուշ> ՋՕԸ (2 ՕԿՋ) |
| 6. | Ոսկեպար-Բաղանիս-Ոսկեվան-Կոթի ինքնահոս ջրագծի վրա՝ Բաղանիս-Ոսկեվան N2 նախկին պոմպակայանի տարածքում, հողային պատվարով, 5 հազ. խմ ծավալով ՕԿՋ կառուցում | |
| 7. | Գողթ համայնքի տարածքում շուրջ 20 հազ. խմ ծավալով կիսակառույց ՕԿՋ-ի վերակառուցում | <Կոտայք> ՋՕԸ (1 ՕԿՋ) |
| 8. | Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի վերջնամասում գտնվող՝ Ներքին Բազմաբերդի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 24 հազ. խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգում | <Արագածոտն> ՋՕԸ (3 ՕԿՋ) |
| 9. | Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի նշ 369+30 հատվածում գտնվող՝ Արուճի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 10 հազ. խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգում | |
| 10. | Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի նշ 29+90 | |

| | | |
|---|---|---|
| | հատվածում գտնվող՝ Մուղնու՝ 25 հազ․ խմ ծավալով ՕՎԶ-ի հիմնանորոգում | |
| 11. | Թալինի 3-րդ հերթի ջրանցքի վերջնամասում Դաշտադեմի պոմպակայանի ջրի ծավալն ապահովելու համար ջրընդունիչ ավազանի մեծացում մինչև 7 հազ․ խմ ծավալով | **<Թալին> ՋՕԸ (1 ՕՎԶ)** |
| **12.** | Նորքի ջրանցքի պկ 87+00 հատվածում բազալտի հանքի թասում շուրջ 10 հազ․ խմ ծավալով ՕՎԶ կառուցում | **<Երևան> ՋՕԸ (1 ՕՎԶ)** |

| N | <u>Լոտ 4 (9 ՕՎԶ)</u> | ՋՕԸ-ի անվանում |
|---|---|---|
| **1.** | Արմաշի պոմպակայանի 3-րդ գոտու ՕՎԶ նորոգում, 60 հազ․ խմ ծավալով ՕՎԶ կառուցում | <Արարատ> ՋՕԸ (4 ՕՎԶ) |
| **2.** | Արմաշի պոմպակայանի 4-րդ գոտու ՕՎԶ, հողային պատվար, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիա, ծավալը կարող է որոշվել տնտեսական նպատակահարմարությունից ելնելով, ՕՎԶ վերակառուցում | |
| **3.** | Զանգակատուն-Պարույր Սևակ ինքնահոս ջրագծի վրա մինչև 100 հազ․ խմ ծավալով (հողային պատվար, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիա) ՕՎԶ կառուցում | |
| **4.** | Արազափի 1 պոմպակայանի՝ շուրջ 20 հազ․ խմ ծավալով ՕՎԶ նորոգում (բետոնային սալերի փոխարինում) | |
| **5.** | Խաչիկի 2-րդ աստիճանի պոմպակայանի ՕՎԶ (նորոգում, բետոնային սալերի կցվածքների նորոգում, բետոնային մասնակի աշխատանքներ) 1,3 հազ․ խմ ծավալով ՕՎԶ վերակառուցում | <Եղեգնաձոր> ՋՕԸ (4 ՕՎԶ) |
| **6.** | Ելփինի պոմպակայանի ՕՎԶ՝ 0,9 հազ․ խմ ծավալով (հողային հիմքով, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիոն էկրանով, կավային շերտով, քարային լիցքով) ջրավազանի կառուցում | |
| **7.** | Կեչուտի ջրատարի Արին-Մալիշկա-Վայք ՕՎԶ՝ 8 հազ․ խմ ծավալով (հողային հիմքով, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիոն էկրանով, կավային շերտով, քարային լիցքով) ջրավազանի կառուցում | |
| **8.** | Կեչուտի ջրատարի Փոռի ջրթափ ավազանի ՕՎԶ՝ 10 հազ․ խմ ծավալով (հողային հիմքով, պոլիէթիլենային թաղանթով հակաֆիլտրացիոն էկրանով, կավային շերտով, քարային լիցքով) ջրավազանի կառուցում | |
| **9.** | Մեղրիի ինքնահոս ջրատարի աջ ճյուղի վերջնամասում Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ գյուղի տարածքում 5-7 հազ․ խմ ծավալով ՕՎԶ և ՕՎԶ-ից աջ ճյուղ ջրանցք ուղղորդվող 200 մմ տրամագծի, շուրջ 300 մ երկարությամբ խողովակաշարի կառուցում | <Սյունիք> ՋՕԸ (1 ՕՎԶ) |

**2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Սույն առաջադրանքի պայմաններով տրամադրվելու են Խորհրդատվական ծառայություններ Ջրային կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և Խորհրդատվական ընկերության (այսուհետ՝ Խորհրդատու) միջև ստորագրված պայմանագրի շրջանակներում:

***Նպատակներից է մշակել* «Շիրակ», «Եղեգնաձոր», «Թալին», «Սյունիք», «Արագածոտն», «Տավուշ», «Գեղարքունիք», «Լոռի», «Արարատ», «Կոտայք», «Երևան» ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում թվով 31 օրվա կարգավորման ջրավազանների առաջնահերթ կառուցում և վերակառուցում» մանրամասն նախագիծը:**

Նախագիծը պետք է տնտեսապես հիմնավորված լինի դաշտային ճարտարագիտական և երկրաբանական ուսումնասիրությունների, լաբորատոր փորձարկումների և տնտեսական վերլուծությունների հիման վրա:

Խորհրդատուն պետք է իրականացնի նաև բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություն, «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կազմի և բնապահպանական փորձաքննության ներկայացնի վերոհիշյալ Մանրամասն նախագիծը (կամ առանձին ՕԿՋ-ների համար այն նախագծային ենթափաթեթները, որոնք նշված օրենքի իմաստով ենթակա են փորձաքննության) և դրա հիման վրա ստանա դրական փորձաքննության եզրակացություն:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 3.1. Նկարագիրը և առաջադրանքը.

*Սույն առաջադրանքով առաջարկվում է մշակել* «Շիրակ», «Եղեգնաձոր», «Թալին», «Սյունիք», «Արագածոտն», «Տավուշ», «Գեղարքունիք», «Լոռի», «Արարատ», «Կոտայք», «Երևան» ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում թվով 31 օրվա կարգավորման ջրավազանների առաջնահերթ կառուցում և վերակառուցում» Մանրամասն նախագիծը:

*Նախագծի մշակման ընթացքում աշխատանքների ծավալները հնարավոր է ենթարկվեն փոփոխության Պատվիրատուի, շահագործող ընկերությունների, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի մասնագետների առաջարկությամբ՝ հաշվի առնելով առկա համակարգերի տեխնիկական վիճակը: Առաջարկությունները կհավաքագրվեն, կհամակարգվեն և Խորհրդատուին կփոխանցվեն Պատվիրատուի միջոցով: Թվարկված, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերից Խորհրդատուին հնարավոր ուղիղ փոխանցված առաջարկները Խորհրդատուն քննարկում է Պատվիրատուի հետ և առաջնորդվում Պատվիրատուի գրավոր դիրքորոշմամբ: Նախատեսվող աշխատանքների ծավալների ճշգրտումներ կարող են լինել ինչպես առկա համակարգերին հարակից տարածքների սահմաններում, այնպես էլ համայնքների վարչական սահմաններում:*

### 3.2. Առաջադրանքի շրջանակները

Սույն առաջադրանքի շրջանակներում Խորհրդատուի գործունեությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում ակնկալվող ծառայություններով, միջոցներով, արդյունքներով և արտադրանքով: Խորհրդատուն ուղղակիորեն կարող է զարգացնել իր սեփական մոտեցումներն ու առաջարկել բոլոր անհրաժեշտ ծառայությունները և լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել՝ ապահովելով բոլոր գնահատումների, պլանավորումների և նախագծման միջոցառումների սահուն և արդյունավետ

իրականացում, ինչը լիովին համապատասխանում է միջազգային չափանիշներին և սահմանված պլանավորման գրաֆիկին:
Ծրագրի իրականացման ընթացքում ակնկալվում է, որ Խորհրդատուն պետք է սահմանի հնարավոր ռիսկերը, որոնք կարող են խանգարել ծրագրի իրականացմանը և մշակի համապատասխան առաջարկություններ՝ ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացքում Խորհրդատուն պետք է պարբերաբար քննարկի ռիսկերը և ազդեցության մեղմացման միջոցառումները Պատվիրատուի և փաստաթղթերով հաստատի համապատասխան արդյունքները: Պատվիրատուն ապահովում է քննարկումներում ՀՏԶՀ-ի և այլ շահագրգիռ կառույցների մասնակցությունը:

*Մատուցվելիք խորհրդատվական ծառայությունները պետք է ներառեն, սակայն չսահմանափակվեն ստորև նշված ենթա-առաջադրանքներով՝*

Կադաստրի լիազոր պետական մարմնից ծառայությունների մեկնարկին հաջորդող առաջին ամսվա ընթացքում ձեռք բերի տվյալ ժամանակահատվածի դրությամբ բոլոր ՕԿԶ-ների տեղամասերի և ՕԿԶ-ի թասի հնարավոր առավելագույն լցվածության նիշից 100 մ շառավղով հարևանությամբ տեղակայված տարածքների կադաստրային քարտեզները՝ նախագծման աշխատանքների համար կիրառելի ֆորմատներով և մասշտաբներով:
Հետազոտի համակարգերի խնդրո առարկա հատվածների ներկա տեխնիկական վիճակը՝ հաշվի առնելով համակարգերի նախատեսվող հատվածներում անհրաժեշտ ծավալով ՕԿԶ-ների և անհրաժեշտության դեպքում դոտացիոն ջրագծերի կառուցման վերաբերյալ Շահագործող ընկերությունների առաջարկությունները:
Իրականացնի մանրամասն ուսումնասիրություն, այդ թվում երկրաբանական, հիդրավլիկական, տեխնիկա-տնտեսական և պատրաստի մանրամասն նախագծեր ՀՀ գործող նորմերի և ստանդարտների պահանջներին համաձայն:
Խորհրդատուն պետք է պատասխանատվություն կրի մանրամասն նախագծերի և տեխնիկական մասնագրերի պատրաստման համար: Նախագծերը պետք է լինեն բավականաչափ մանրամասն՝ ճշգրիտ նախահաշվով: Նախագծով պետք է ներկայացվեն այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են տեղադիրքը, չափը, կարողությունը, սարքավորումները և աշխատանքների մասնագրերը:
Ստանա ՀՀ օրենսդրությամբ և իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ բոլոր թույլտվությունները և համաձայնությունները: Խորհրդատուին հանձնարարվում է աջակցել Պատվիրատուին և կազմել անհրաժեշտ փաստաթղթային փաթեթները և Պատվիրատուի պահանջի դեպքում հանդես գալով Պատվիրատուի անունից (համապատասխան իրավական հիմքերի ապահովմամբ) ներառյալ ստանալ նախագծման թույլտվությունները (կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքները) այն համայնքներից, որոնց վարչական սահմաններում պետք է կատարվեն շինարարական աշխատանքներ:
Իրականացնի ծրագրերի անմիջական տարածքի և ծրագրին առնչվող տարածքների բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություն այնպիսի խորությամբ և մանրամասնություններով, որոնք բավարար կլինեն ՀՀ օրենսդրությամբ (մասնավորապես «ՇՄԱԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և դրան առնչվող ենթաօրենսդրական

ակտերով), ինչպես նաև միջազգային կառույցների պահանջներով սահմանված ազդեցությունների գնահատումներ կատարելու, փորձաքննական դրական եզրակացություններ ապահովելու և Պատվիրատուի վերջնական հաստատումները ստանալու համար:

Աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվի միջազգային ֆինանսական հաստատությունների, մասնավորապես Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի այնպիսի գործառնական քաղաքականություններով և ուղեցույցերով սահմանված պահանջներով, որոնք վերաբերում են սույն առաջադրանքին:

Սույն առաջադրանքով սահմանված յուրաքանչյուր նախագծային փաթեթի նախագծման աշխատանքների ընթացքում Խորհրդատուի համապատասխան թիմը պետք է վերլուծի նախնական նախագծային տվյալները և գնահատի նախագծի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Խորհրդատուն պարտավոր է ապահովել, որ ծրագրի նախագիծը և նրա Տեխնիկական մասնագրերն արտացոլեն Բնապահպանական և սոցիալական չափանիշները, իսկ ԲՍԿՊ-ով նախատեսված մեղմացնող միջոցառումների բոլոր ծախսերը ներառի մասնագրերում և աշխատանքների ծավալներում առանձին տողերով:

Սույն առաջադրանքի պայմանների շրջանակներում խորհրդատուն պետք է մշակի նախատեսվող աշխատանքների նախնական և վերջնական նախագծերի փաթեթներ,

**I փուլ**՝ Ծրագրի տեխնիկա-տնտեսական հիմնավորում, այդ թվում հետազոտություններ, նախնական նախագծի հաշվետվության կազմում, բնապահպանական և սոցիալական ուսումնասիրման հաշվետվության կազմում և տնտեսական վերլուծություններ:

**II փուլ**՝ Մանրամասն նախագիծ, տեխնիկական մասնագրեր, այդ թվում բնապահպանական փորձաքննության ներկայացվող ՆԳՀ, նախագծի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր դրական փորձաքննական եզրակացությունները, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի փորձաքննության (**Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման գործընթացն իրականացնում է պատվիրատուն. Համաձայն ՀՀ կառ. 04.05.2017թ. 526-Ն որոշման կարգի 23-րդ կետի 7-րդ ենթակետի:**):

**III փուլ**՝ Հեղինակային հսկողություն շինարարության ընթացքում:

## 3.3. ՓՈՒԼ I. Ծրագրի տեխնիկա-տնտեսական հիմնավորում, նախնական նախագծի կազմում

### 3.3.1. Ճարտարագիտական հետազոտություններ

Ճարտարագիտական հետազոտությունների ընթացքում Խորհրդատուն յուրաքանչյուր համակարգի համար պետք է.

- Կատարի համակարգերի խնդրո առարկա հատվածների և նախագծային տեղամասերի բոլոր կառուցվածքների զննում: Զննման և վիզուալ ուսումնասիրության հիման վրա՝ ներգրավելով շահագործող ընկերության և այլ շահագրգիչ կազմակերպությունների (ՋՕԸ, ՀՏԶՀ) ներկայացուցիչներին և

օգտագործելով հետազոտությունների նախնական տվյալները, պատրաստի թերությունների ակտ:

- Պահանջվող տեղերում կատարի հիդրոլոգիական ուսումնասիրություններ և անհրաժեշտ հաշվարկներ, իրականացնի երկրաբանական հանույթ՝ կոնկրետ տեղամասերում վերակառուցման աշխատանքների հնարավորությունը հաստատելու համար, կատարի տեղամասի լրացուցիչ հետազոտություն, այդ թվում գեոտեխնիկական աշխատանքներ՝ պարզաբանելու համակարգերի հնարավոր վնասման պատճառները:
- Գնահատի գոյություն ունեցող ոռոգման բաշխիչ ցանցի աշխատանքի արդյունավետությունը ջրի օգտագործման և ջրօգտագործողներին ծառայությունների մատուցման տեսանկյունից:
- Ջրի կառավարման պլանի հիման վրա վերլուծի համակարգերի և համապատասխան ջրի կարգավորիչ կառուցվածքների աշխատանքը: Այս վերլուծությունը կարող է ի հայտ բերել նոր կարգավորիչ կառուցվածքներ կառուցելու կամ գոյություն ունեցողները վերացնելու անհրաժեշտությունը:
- Դիտարկի շինարարության կազմակերպմանը վերաբերող հիմնական նորմատիվ ակտերը և յուրաքանչյուր տարբերակի համար սահմանի շինարարության ժամկետը:
- Առաջարկված տեխնիկական տարբերակների համար Խորհրդատուն պետք է հաշվարկի աշխատանքների ֆիզիկական ծավալները և կազմի նախահաշիվ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվ:
- Վերոհիշյալ հետազոտությունների և վերլուծության հիման վրա պատրաստված այլընտրանքային տարբերակները և տեխնիկական լուծումները (որոնք փաստորեն իրենցից ներկայացնում են նախնական նախագիծ) ներկայացնի Պատվիրատուի դիտարկմանը: Պատվիրատուն ապահովում է ՀՏԶՀ-ի և Շահագործող ընկերության ներկայացուցիչների մասնակցությունը նշված տարբերակների և լուծումների քննարկմանը: Համատեղ դիտարկման եզրակացությունները փաստաթղթավորվում է Խորհրդատուի կողմից պաշտոնական արձանագրությամբ, որը պետք է հաստատեն կողմերը: Պատվիրատուի ներկայացուցիչների կողմից ընդունված բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է մտցվեն Նախնական նախագծերի վերջնական հաշվետվություններում:
- Նախնական նախագծի սկզբնական հաշվետվությունը ներկայացնելուց հետո, մինչև հետագա լրամշակման համար վերակառուցման տարբերակի կամ տեխնիկական լուծման մասին որոշում կայացնելը, Պատվիրատուն կարող է պահանջել, որ Խորհրդատուն դիտարկի այլ տարբերակներ կամ տեխնիկական լուծումներ:
- Ներկայացնի Նախնական նախագծերի վերջնական հաշվետվությունները:

**Ծրագրի իրականացման պլանի մշտադիտարկում**

Խորհրդատուն, խորհրդակցելով Ջրային կոմիտեի, ՀՏԶՀ-ի և ՋՕԸ-ի(երի) հետ, ծրագրի համար պետք է պատրաստի, վերանայի և մշակի Ծրագրի իրականացման պլան (ԾԻՊ): ԾԻՊ-ը կընդգրկի ծրագրի իրականացման բոլոր ոլորտները, ինչպես նաև, ի թիվս այլոց, կներառի.

- Ծրագրի պլան, որը ամբողջ ծրագիրը ավարտին հասցնելու համար մշակված մանրամասն պլան է (կազմված համապատասխան ներկայացման ձևաչափի հիման վրա, օրինակ՝ առնչվող գործողությունների պլանը), որը ներկայացնում է նախագծի, հաստատումների, շինարարության, շահագործման, ծրագրի ավարտման համար իրականացվող աշխատանքները և հիմնական միջոցառումները: Այս պլանի մշակման ընթացքում Խորհրդատուն պետք է հաստատի, որ պլանավորման, շինարարության և սպասարկման համար պահանջվող հաստատումներն ու թույլտվություններն առկա են և ծրագրի պլանը համապատասխանում է գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին:
- Ծրագրի բյուջե - ամբողջ ծրագրի համար նախատեսված մանրամասն ծախսերի բյուջեն է, ինչպես նաև դրամական հոսքերի (մասհանումների) կանխատեսումները, ներառյալ՝ ՇՄՍԱԳ-ի իրականացումը: Վերջինս պետք է հիմնված լինի ծրագրի տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության մեջ մանրամասն ներկայացված նախահաշիվների առկա առաջարկների վրա և պետք է լրամշակվի, բոլոր առաջարկները:
- Ծրագրի ռիսկերի մատրիցա - ռիսկերի մատրիցան է, որն ուրվագծում է ծրագրի հետ կապված հիմնական մարտահրավերներն ու ռիսկերը, ինչպես նաև դրանց մեղմացման, նվազեցման կամ չեզոքացման համար առաջարկվող միջոցառումները:
- Խորհրդատուն պետք է ներկայացնի վերամշակված ԾԻՊ-ը Պատվիրատուին վերջինիս հաստատումը ստանալու համար: ԾԻՊ-ի հաստատումից հետո Խորհրդատուն պետք է ուշադիր հետևի առաջընթացին՝ ըստ պլանավորված ժամանակացույցի, բյուջեի և գնումների պլանի:

  - Երբ ԾԻՊ-ի որևէ ոլորտում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջանում, Խորհրդատուն և Պատվիրատուն պետք է ուղարկեն այդպիսի փոփոխության անհրաժեշտությունը հաստատող գրություն Կապալառուին: Սա պետք է շարունակվի ամբողջ առաջադրանքի ընթացքում:

### 3.3.2. Բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություններ, ելակետային տվյալների հավաք, վերլուծություն և գնահատում

Խորհրդատուն պետք է հավաքի ճշգրտված բնապահպանական և սոցիալական տվյալներ իրականացնելով հասանելի նախագծային նյութերի ուսումնասիրություններ և դաշտային աշխատանքներ՝ դաշտային այցերի, հարցումների և ուսումնասիրման այլ մեթոդների միջոցով՝ ըստ անհրաժեշտության: Սոցիալական ազդեցության գնահատման մեթոդաբանությունը նախքան դաշտային աշխատանքների մեկնարկը պետք է ներկայացվի և համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Դաշտային աշխատանքների իրականացումից առնվազն 7 աշխատանքային օր առաջ Խորհրդատուն կամ նրա համապատասխան մասնագետները պետք է այդ մասին նախապես տեղեկացնեն Պատվիրատուին, իսկ վերջինս՝ առնվազն 5 աշխատանքային օր առաջ այդ մասին տեղեկացնի ՀՏԶՀ-ին, ԶՕԸ-ին և նրանց համապատասխան մասնագետներին: Պատվիրատուն՝ ի դեմս բնապահպանության և սոցիալական հարցերի մասնագետների (հարկ եղած դեպքերում ներգրավելով նաև հրավիրված մասնագետների), հնարավորության դեպքում կարող է մասնակցել այդ աշխատանքներին: Խորհրդատուն առնվազն մեկամսյա պարբերությամբ

Պատվիրատուին պետք է ներկայացնի հաշվետվություն՝ այս ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն տեքստային նկարագրությունների, պլանների, քարտեզների, լուսանկարների քանակական/որակական ցուցանիշների և աղյուսակների տեսքով: Այդ բոլոր տվյալները պետք է տրամադրվեն էլեկտրոնային տեսքով, իսկ քարտեզները՝ GIS համակարգի հետ համատեղելի ձևաչափով: Տեխնիկա-տնտեսական ուսումնասիրությունների ավարտին Խորհրդատուն պետք է ներկայացնի ելակետային բնապահպանական և սոցիալական ուսումնասիրման հաշվետվություն:

### 3.3.3. Հողի ձեռքբերում և վերաբնակեցում

Խորհրդատուն պետք է հնարավորինս խուսափի մասնավոր սեփականություն հանդիսացող հողի ժամանակավոր կամ մշտական օգտագործումից՝ ջրագծերի անցկացման, շինարարական աշխատանքների կազմակերպման կամ շինարարական հրապարակների հիմնման նպատակով: Այդուհանդերձ, Ծրագրով որոշված միջոցառումները կարող են պահանջել հողի և գույքի ժամանակավոր և/կամ մշտական ձեռքբերում կամ հողի և գույքի օգտագործում շինարարության և հետագա շահագործման ընթացքում: Շինարարության մեկնարկից առաջ հողի օտարման և վերաբնակեցման բոլոր հնարավոր հարցերը լուծելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Վերաբնակեցման գործողությունների պլանի (ՎԳՊ) մշակման քաղաքականությունը սահմանելու նպատակով Խորհրդատուն ծառայությունների տրամադրման առաջին փուլում կպատրաստի Վերաբնակեցման քաղաքականության շրջանակի (ՎՔՇ) հակիրճ տարբերակ: Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը կպարզաբանի հողն օտարելու և վերաբնակեցնելու սկզբունքները, իրավական շրջանակը և կազմակերպչական մեխանիզմները՝ Համաշխարհային բանկի ESS5-ի (Հողի օտարում, հողօգտագործման սահմանափակումներ և հարկադիր վերաբնակեցում) համաձայն: Առաջադրանքը ներառելու է հետևյալ գործողությունները.

- նույնականացնել և նկարագրել հնարավոր ազդեցությունները հողի վրա, ձեռքբերումը / օգտագործումը կամ վերաբնակեցումը (լինի դա ժամանակավոր, թե մշտական), որը կարող է պահանջվել ծրագրի շրջանակում,
- ներկայացնել հիմնական քաղաքականությունները, սկզբունքները և ինստիտուցիոնալ մեխանիզմները, որոնցով կղեկավարվի ծրագրի շրջանակում պահանջվող ցանկացած վերաբնակեցում կամ հող,
- պարզաբանել վերաբնակեցման իրավական շրջանակը, այդ թվում առաջարկել միջոցառումներ՝ ազգային օրենսդրության և Համաշխարհային բանկի քաղաքականությունների միջև ցանկացած տարաձայնություն հաղթելու համար,
- որոշել տուժած ակտիվների գնահատման մեթոդները,
- կազմել իրավունքների նախնական մատրիքս, որում մանրամասն նշված կլինեն տրամադրվող աջակցության տարբեր տեսակները և փոխհատուցումը տարբեր կատեգորիաների իրավասու տուժած մարդկանց համար:

Նախագծային լուծում ընտրելիս Խորհրդատուն առավելությունը պետք է տա այն տարբերակին, որի դեպքում հողի/գույքի վերցման անհրաժեշտություն չի լինի կամ նվազագույն ծավալի կլինի: Եթե ընտրված նախագծային լուծումը պահանջի (ա) հողի/գույքի ոչ կամավոր ժամանակավոր կամ մշտական օտարում կամ օգտագործում, որը կբերի (i) կացարանի տեղափոխման կամ կորստի, (ii) գույքի կորստի կամ գույքի

հասանելիության կորստի, (iii) եկամուտների կամ ապրուստի միջոցների կորստի (անկախ նրանից, տեղափոխվել է տուժած անձն այլ վայր, թե ոչ), կամ (բ) մասնավոր տարածքներ մուտքի ոչ կամովի սահմանափակման, ինչը բացասական ազդեցություն կունենա տեղափոխված անձանց կենսամակարդակի վրա, խորհրդատուն պետք է ձեռք բերի ծրագրի տարածքի կադաստրային տվյալները, գնահատի պահանջվող վերաբնակեցման/հողի օտարման կամ օգտագործման շրջանակները, նկարագրի հողօգտագործման ձևերը և ներկայացնի դրանք Պատվիրատուի դիտարկմանն՝ առաջնորդվելով Վերաբնակեցման քաղաքականության շրջանակի մոտեցումներով:

### 3.3.4. Տնտեսական վերլուծություն

Խորհրդատուն պետք է գնահատի յուրաքանչյուր առաջարկված վերականգնման և կառուցման տարբերակի տնտեսական շահութաբերությունը Պատվիրատուի համար ընդունելի գործիքներին համապատասխան:

Ակնկալվում է, որ խորհրդատուն հստակորեն կսահմանի այն պայմանների և արդյունքների ելակետային տվյալները, որոնք կանխատեսվում են ապագայում՝ առանց առաջարկվող ներդրումների իրականացման: Ելակետային տվյալներում կորոշվեն ջրօգտագործողների թիվը, ոռոգելի հողատարածքի ավելացման հնարավորությունը, ինչպես նաև հետագա ժամանակաշրջանների համար պահպանման և այլ ընթացիկ ծախսերը՝ առանց ներդրումների:

### 3.3.5. I Փուլի ավարտը և ներկայացվելիք նյութերը

I փուլն ավարտվում է, երբ.

1. Պատվիրատուին ներկայացվում են նախագծերը և այլընտրանքային տեխնիկական լուծումները, այդ թվում արժեքի հաշվարկները, շինարարության նախնական պլանավորում, տնտեսական վերլուծություն:
2. Ներկայացվում է հաշվետվություն կատարված բնապահպանական և սոցիալական ուսումնասիրությունների վերաբերյալ, որտեղ նաև կներկայացվի հողի օտարման և վերաբնակեցման ազդեցությունը և ՎԳՊ-ի/ների պատրաստման անհրաժեշտությունը:
3. Բնապահպանական փորձաքննության ենթակա ենթա-փաթեթների/ՕԿՋ-ների մասով մշակված, 1-ին հանրային քննարկումներն անցած և ՇՄ նախարություն ներկայացված ՆԳՀ-ի փաթեթ, որի շրջանակներում Խորհրդատուն պետք է հանդես գա որպես Ձեռնարկող՝ ՇՄԱԳ և փորձաքննության մասին ՀՀ օրենքի իմաստով,
4. Պատվիրատուին ներկայացվում է շինարարական աշխատանքների Նախնական նախագծի հաշվետվություն: Յուրաքանչյուր փաթեթի համար պատրաստվում է առանձին հաշվետվություն: Խորհրդատուն պետք է նախնական նախագծի վերջնաժամկետից 15 օր առաջ Պատվիրատուին ներկայացնի հաշվետվությունը (ներառյալ բնապահպանական և սոցիալական ուսումնասիրման հաշվետվությունը)՝ դիտարկման, ուղղումներ անելու և հաստատման համար:
5. Ներկայացվում են Նախնական նախագծերի վերջնական հաշվետվությունները, որտեղ հաշվի են առնված Պատվիրատուի բոլոր դիտողություններն ու առաջարկությունները:

ՎՔՇ (հակիրճ տարբերակ)

6. II փուլի նախագծային աշխատանքները սկսվում են Պատվիրատուի կողմից I փուլի աշխատանքների արդյունքների հաստատումից հետո:

## 3.4. ՓՈՒԼ II. Մանրամասն նախագծային փաթեթի մշակում

II փուլում Խորհրդատուն պետք է մշակի Մանրամասն նախագծային փաթեթ, ըստ որի կկազմի Մրցութային փաստաթղթերի տեխնիկական մասը (գծագրեր, տեխնիկական մասնագրեր, աշխատանքների ծավալների ցուցակ): Գծագրերը պետք է պատրաստվեն AutoCAD ծրագրով, տեքստային մասերը՝ Microsoft Word-ով, աշխատանքների ծավալների ցուցակը և մյուս հաշվարկները՝ Excel-ով: Մանրամասն նախագծային փաթեթը պատրաստելիս Խորհրդատուն պետք է երաշխավորի, որ շինհրապարակի պայմանները ճիշտ արտացոլված լինեն շինարարության մրցույթի մասնակիցներին ներկայացվող փաստաթղթերում: Մանրամասն նախագծի մշակման և վերջնականացմանը զուգընթաց, Խորհրդատուն շարունակում է ներգրավված լինել Բնապահպանական փորձաքննության գործընթացում՝ որպես Ձեռնարկող, փորձաքննության շրջանակներում ըստ անհրաժեշտության լրամշակելով և վերջնական տեսքի բերելով ՆԳՀ-ը և ՎԳՊ-ն (անհրաժեշտության դեպքում):

Այսպիսով, նախագծային փաթեթում ներառված յուրաքանչյուր նախագիծը պետք է բավականաչափ մանրամասն լինի շինարարությունն իրականացնելու համար, որպեսզի կապալառուին մնա միայն անել կոնկրետ աշխատանքների իրականացման աշխատանքային գծագրերը:

**Տեխնիկական ծրագրի բաղադրիչների վերջնական մանրամասն նախագիծ**

Ծրագրի բոլոր բաղադրիչների համար վերջնական նախագծային աշխատանքների շրջանակներում կատարվելիք խորհրդատվական ծառայությունների գլխավոր առաջադրանքները պետք է ներառեն հետևյալ կետերը, բայց չսահմանափակվեն դրանցով.

- Ծրագրի յուրաքանչյուր կառուցվածքի համար առանձին գծագրերի ներկայացում, համապատասխան ծավալաթերթով: Գծագրերը պետք է իրականացված լինեն համապատասխան մասշտաբով, նիշերով, խորությունը, բարձրությունը և երկարությունը բնութագրող չափման գծերով: Գծագրում ներկայացված կտրվածքի ընտրությունը և քանակը պետք է բնութագրի ամբողջ կառուցվածքը, ներկայացված բոլոր ծավալների ճշգրիտ հաշվարկով:
- Շինարարության ժամանակավոր շինությունների և նախապատրաստական համապատասխան աշխատանքների կազմակերպման մանրամասն գծագրեր, մասնագրեր, ծավալաթերթ և նախահաշիվ:
- Անհրաժեշտության դեպքում ենթակառուցվածքների համապատասխան պետական մարմինների հետ, դրանց հնարավոր տեղափոխում, ծավալաթերթ և նախահաշիվ, աշխատանքների իրականացման ժամանակացույց:
- Ներդրումների միջոցառումների հիմնավոր մանրամասն պլանավորում, աշխատանքների իրականացման ժամանակացույց:
- Շինմոնտաժային աշխատանքների տեխնիկական պայմանների պատրաստում:

- Շինմոնտաժային աշխատանքների ծախսերի հաշվարկ:
- Շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր հաշվարկ (զաղտնի նախահաշիվ) առանձին մատակարարման ու շինարարական աշխատանքների և ներմուծվելիք բաղադրիչների համար:
- Մանրամասն մասնագրեր՝ պահանջվող տեխնիկական և շահագործման սարքավորումների, պահեստամասերի, նորոգման նյութերի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների համար, որոնք պետք է գնվեն ծրագրի շրջանակներում:
- Նյութերի և սարքավորումների առաքման ծախսերի հաշվարկ:
- Տեխնիկական պայմանների պատրաստում՝ նյութերի և սարքավորումների առաքման համար:
- Անհրաժեշտության դեպքում շինարարության ծրագրի, հողի սեփականության, տարածքով անցնելու և շինարարության թույլտվության ու այլ ծրագրերի նախապատրաստում:
- Ներդրումների միջոցառումների հիմնավոր մանրամասն պլանավորում, աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

- շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար

### 3.4.1. Գծագրեր

Գծագրերը պետք է հիմնված լինեն ճարտարագիտական հետազոտությունների, հաշվարկների և վերլուծությունների արդյունքների վրա: Գծագրերը պետք է պատրաստվեն բավարար աստիճանի մանրամասնություններով, այդ թվում պարունակեն այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն կատարելու բարձր որակի շինարարություն, մատակարարել ջրակայուն նյութեր և ճշգրիտ որոշել աշխատանքների ծավալները: Մանրամասն նախագծային հաշվետվության մեջ մանրամասն նախագծի հիման վրա պատրաստվում և ներկայացվում է գծագրերի ցուցակը՝ այդ թվում տեղանքի հատակագծերը: Գծագրերի փաթեթը կազմված կլինի ընդհանուր գծագրերից, մանրամասն գծագրերից, կլինեն երկայնական և լայնական կտրվածքներով, որտեղ կերևան աշխատանքների չափերը և անհրաժեշտ նյութերը: Գծագրերի ներկայացման, նրանց ձևի, քանակի և մասշտաբի, հետազոտական աշխատանքների մասին անհրաժեշտ մանրամասն տեղեկությունները նկարագրվում են գործող նորմատիվ ակտերում (ՇՆևԿ-երում/շինարարական նորմերում և ՊՍ-երում (պետական ստանդարտներում):

Աշխատանքների կազմը և ծավալները չպետք է ներառեն հարակից միջոցառումները, շինարարության կազմակերպման, տեխնոլոգիական սխեմաների և գործարկման հետ կապված աշխատանքները, էլեկտրամեխանիկական և հիդրոմեխանիկական սարքավորումների գործարկման աշխատանքները՝ բացառությամբ այն աշխատանքների, որոնք նախագծում սահմանվում են որպես պարտադիր աշխատանքներ:

### 3.4.2. Տեխնիկական մասնագրեր

Շինարարական աշխատանքների «Տեխնիկական մասնագրերը» ներառում են աշխատանքների կատարման դրույթների և պայմանների մանրամասն նկարագիրը, այդ թվում հստակ մասնագրեր, առանձին՝ համակարգերի խնդրո առարկա հատվածներում նախատեսվող կառուցվածքների համար, ներառելով կատարվելիք աշխատանքը, որոնք կլրացնեն համապատասխան գծագրերի վրա տեղ գտած տեղեկությունը: Մասնագրերի հիշյալ նկարագրերը կներառեն նաև ժամանակավոր շինություններ, աշխատանքների կազմակերպման մանրամասն գծագրեր և ծավալաթերթ, նախատեսվող տարածքին համապատասխան, աշխատանքների իրականացման մանրամասն նկարագրություն, ինչպես նաև տեխնիկական անվտանգություն՝ համաձայն տեղական և միջազգային չափանիշների: Բացի դրանից, նրանք ներառում են նյութերի, ապրանքների և ծառայությունների պահանջվող ստանդարտները և սահմանում Կապալառուի համար պարտադիր աշխատանքային ծրագիր: Տեխնիկական մասնագրերը կազմում են մրցութային փաստաթղթերի մաս:

Խորհրդատուի կողմից պատրաստված Տեխնիկական մասնագրերը պետք է ներառեն շինարարական աշխատանքների բոլոր այն տեսակները, որոնք անհրաժեշտ են կիրառել/իրականացնել շինարարության ընթացքում: Դրանք պետք է հատուկ հարմարեցված լինեն յուրաքանչյուր շինարարական փաթեթին:

Տեխնիկական մասնագրերի վերջում «Հավելվածի» տեսքով ներառվում են շինարարության գործընթացի անընդմեջությունն/անընդհատությունն ապահովող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հենանիշերի ցուցակ, գազատարների, մալուխների, ճանապարհների և այլ կոմունիկացիաների հետ հատումների, անհրաժեշտության դեպքում՝ համակարգում ջրի

մատակարարման դադարեցման կամ վերսկսելու, ռեզերվային կամ թափոնային հրապարակների, հողի ձեռքբերման և այլ անհրաժեշտ հարցերի համաձայնեցումները գերատեսչական մարմինների հետ, փորձագիտական եզրակացություններ, տեխնիկական պայմաններ, ինչպես նաև Ծրագրի իականացման համար պահանջվող փաստաթղթեր:

Գաղտնի/Կոնֆիդենցիալ նաշահաշիվը պետք է բաղկացած լինի համապարփակ նկարագրական մասից, որի անքակտելի մասը կհանդիսանան նաև խորհրդատուի եզրակացությունները մանրամասը հիմնավորող գնահատականները՝ հաշվարկված կամ սահմանված կարևոր միավոր գները, ամբողջությամբ հաշվի առնելով աշխարհագրական և ծրագրային յուրահատուկ ասպեկտները: Բոլոր համապատասխան նախագծային հաշվարկները, հնարավոր լրացուցիչ քարտեզները և գծագրերը, աշխատանքների իրականացման ժամանակացույցերը, աղյուսակները, ամփոփագրերը և այլ, պետք է ներկայացվեն հայերեն և անգլերեն լեզուներով՝ յուրաքանչյուրը երեք օրինակից:

### 3.4.3. Աշխատանքների ծավալների ցուցակ և շինարարական աշխատանքների պլանավորում

Շինարարական աշխատանքների պլանավորման մեջ ընդգրկվում են ընտրված տարբերակի բոլոր աշխատանքները՝ ձմեռային պայմանները, ինչպես նաև շինարարության փաստացի ժամանակի և մեթոդների գնահատումը:

Համաձայն շինարարական աշխատանքների պլանավորման, Խորհրդատուն պետք է պատրաստի աշխատանքների ծավալների ճարտարագիտական նախահաշիվներ: Այդ ծավալները ներառվում են աղյուսակի մեջ, որը այսուհետև կկոչվի «Աշխատանքների ծավալների ցուցակ» (ԱԾՑ), որն ընդգրկվում է մրցութային փաստաթղթերի մեջ: Խորհրդատուն պետք է պատրաստի պարզեցված ԱԾՑ՝ յուրաքանչյուր համակարգի խնդրո առարկա հատվածում նախատեսվող կառույցի համար, որը կներառի բավարար քանակությամբ աշխատանքների նկարագրություն՝ ծավալների ողջամիտ մանրամասներով: ԱԾՑ-ն պետք է բաղկացած լինի ամփոփ ԱԾՑ-ից և ԱԾՑ-ի առանձին բաժիններից (հողային, բետոնային, տեխնոլոգիական և այլ աշխատանքների): ԱԾՑ-ի առանձին բաժինները ներկայացվում են առանձին էջերի վրա և համաձայնեցվում են Պատվիրատուի հետ: Խորհրդատուն «Ընդհանուր հավելվածներ» բաժնում պետք է ներկայացնի ամփոփ աղյուսակ, որում հստակ ցույց տրված լինի, թե գծագրերի վրա աշխատանքների ծավալների որ կետը ԱԾՑ-ի որ կետին է համապատասխանում:

ԱԾՑ-ն չպետք է ներառի շինարարության կազմակերպման, տեխնոլոգիական սխեմաների և գործարկման հետ կապված աշխատանքների ծավալները՝ բացառությամբ այն աշխատանքների, որոնք նախագծում սահմանվում են որպես պարտադիր աշխատանքներ:

### 3.4.4. Ճարտարագիտական նախահաշիվների պատրաստում

Շինարարական աշխատանքների «Ճարտարագիտական նախահաշիվները» չեն ներառվում մրցութային փաստաթղթերի մեջ: Դրանք նախատեսված են Պատվիրատուին օբյեկտի նախահաշվային արժեքի մասին տեղեկություն տալու համար: Նման տեղեկությունից օգտվելու հնարավորություն ունեցողներին կամ այն պատրաստողներին

խստորեն արգելվում է դրա մասին հայտնել որևիցե մեկին, մասնավորապես կապալառուներին և մատակարարներին:

### 3.4.5. Նախագծի բնապահպանական փորձաքննություն

Առաջնորդվելով ՇՄԱԳ և փորձաքննության մասին ՀՀ օրենքի պահանջներով, Խորհրդատուն պետք է պատրաստի բնապահպանական փորձաքննության ներկայացվող ՆԳՀ-ն յուրաքանչյուր, ըստ իրականացվելիք շինարարական աշխատանքների փուլերի, նախագծային փաթեթի կամ առանձին ՕԿՋ-ի համար առանձին՝ հիմնվելով տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության փուլում մշակված բնապահպանական և սոցիալական ուսումնասիրման հաշվետվության, ինչպես նաև մանրամասն նախագծային փաստաթղթերից ձեռք բերված ելակետային տեղեկատվության վրա և նախապես Պատվիրատուի և փորձաքննության լիազոր մարմնի հետ հստակեցնելով բնապահպանական փորձաքննության ենթակա նախագծային փաթեթենրը կամ առանձին ՕԿՋ-ների ենթա-նախագծային փաթեթները: Բնապահպանական փորձաքննության ներկայացվելիք Նախնական գնահատման հայտը պետք է մշակվի ՀՀ համապատասխան օրենսդրության ու նորմատիվային ակտերին համաձայն:
Խորհրդատուն պետք է ապահովի, որ ծրագրի նախագիծը և դրա տեխնիկական մասնագրերում առանձին տողերով արտացոլվեն նախագծի՝ շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները և համապատասխան ծախսերը:
Բնապահպանական փորձաքննության ներկայացվող վերջնական հայտը նախապես Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո Խորհրդատուի կողմից պետք է ներկայացվի ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հաստատմանը (բնապահպանական փորձաքննության)՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջներին: Խորհրդատուն պետք է պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում ներկայացնի Պատվիրատուին՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության փորձագիտական դրական եզրակացությամբ վերջնական նախագիծը:

### 3.4.6. Հողի ձեռքբերում և վերաբնակեցում (ըստ անհրաժեշտության)

Տեխնիկատնտեսական ուսումնասիրության փուլի ընթացքում ստացված տեղեկատվության հիման վրա, եթե Պատվիրատուն հաստատի, որ նախագծային լուծումը կարող է հանգեցնել (ա) հողի/գույքի ժամանակավոր կամ մշտական հարկադիր օտարման , որը կհանգեցնի ՝ կացարանի տեղափոխման կամ կորստի, գույքի կորստի կամ գույքի հասանելիության կորստի, եկամուտների կամ ապրուստի միջոցների կորստի (անկախ նրանից, տեղափոխվել է տուժած անձն այլ վայր, թե ոչ), կամ (բ) մասնավոր տարածքներ մուտքի սահմանափակման, ինչը բացասական ազդեցություն կունենա տեղափոխված անձանց կենսամակարդակի վրա, Խորհրդատուն քննարկումներ կկազմակերպի հնարավոր ազդակիր համայնքների հետ :

Այնուհետև Խորհրդատուից կպահանջվի կազմել քննարկումների արդյունքների արձանագրություններ, որոնք կուսումնասիրվեն Պատվիրատուի կողմից նախագծային լուծման վերջնական հաստատումը տրամադրելու նպատակով (կամ այլ որոշում ընդունելու նպատակով): Աշխատանքը շարունակելու թույլտվությունը ստանալուն պես Խորհրդատուն կանցկացնի Ծրագրի ազդակիր բնակչության հաշվառում և կկատարի

վնասների գույքագրում: Անհրաժեշտության դեպքում զուգահեռաբար կկատարվի ելակետային իրավիճակի հետազոտություն: Հետազոտության գործիքների արդյունքները ստանալուց և ամփոփելուց հետո Պատվիրատուն կընդունի որոշում՝ ՎԳՊ (համառոտ կամ ամբողջական՝ կիրառելիության դեպքում) մշակելու անհրաժեշտության վերաբերյալ: Եթե որոշվի դրա անհրաժեշտությունը, Խորհրդատուն կկազմի ՎԳՊ-ն, մշակումը դիտարկվում է որպես սույն առաջադրանքի մաս և իրականացվում է Պատվիրատուից համապատասխան ցուցում ստանալու դեպքում: Այս առաջադրանքի շրջանակներում խորհրդատուից պահանջվում է կատարել, սակայն չսահմանափակվել հետևյալ գործողություններով.

(ա) Հավաքել տվյալներ ծրագրի ազդեցության գոտում առկա հողի/գույքի վերաբերյալ, քննարկել հողի ձեռքբերմանը և վերաբնակեցմանն առնչվող հարցերը Պատվիրատուի հետ, ներկայացնել ձեռքբերման ենթակա հողի/գույքի տվյալները՝ համագործակցելով համապատասխան պետական մարմինների և կազմակերպությունների հետ՝ հնարավոր լրացուցիչ կառույցների նախագծման դեպքում:

(բ) Մշակել ՎԳՊ-ը՝ համապատասխան ՀՀ օրենսդրության ու նորմատիվ իրավական ակտերի համաձայն: Կազմել հողի/գույքի ձեռքբերման և վերաբնակեցման հետ առնչվող այլ փաստաթղթեր՝ ՀՀ օրենսդրության ու նորմատիվ իրավական ակտերի պահանջների համաձայն:

(գ) Կազմակերպել և մասնակցել հանրային լսումներին և ազդակիր բնակչության իրազեկող հանդիպումներին, ինչպես նաև բոլոր առնչվող պաշտոնական հանդիպումներին, կազմել հանդիպումների արձանագրություններ:

(դ) Աջակցել հողի/գույքի ձեռքբերման/օգտագործման և վերաբնակեցման հետ այլ առնչվող այլ փաստաթղթերի հաստատմանը՝ ՀՀ օրենսդրության ու նորմատիվ իրավական ակտերի պահանջների համաձայն: Խորհրդատվություն ցուցաբերել Պատվիրատուին՝ հողի և գույքի ձեռքբերման/օգտագործման և վերաբնակեցման գործընթացում:

Հողի ձեռքբերման և վերաբնակեցման հարցերի հետ առնչվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն Պատվիրատուի հաստատմանը էլեկտրոնային և թղթային տարբերակներով՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Հողի ձեռքբերման և վերաբնակեցման փաստաթղթերը պետք է հաստատվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Եթե ծրագրի շրջանակներում ՎԳՊ մշակման անհրաժեշտություն լինի, ապա Խորհրդատուն պարտավորված կլինի պատրաստել ՎԳՊ և ուղարկել Պատվիրատուին հաստատման համար: Պատվիրատուն իր դիտողություններն ու հարցադրումները կներկայացնի Խորհրդատուին մեկ շաբաթվա ընթացքում: Խորհրդատուն առավելագույնը մեկ շաբաթում պետք է լրամշակի փաստաթուղթը և ներկայացնի Պատվիրատուին հայերեն և անգլերեն տարբերակները մեկ շաբաթվա ընթացքում:

### 3.4.7. Ընդհանուր հավելվածներ

Ընդհանուր հավելվածներում ներառվում են այնպիսի նյութեր, որոնք անմիջականորեն կապված չեն շինարարության հետ, օրինակ՝

- առաջադրանքի պայմաններ,
- թերությունների ակտեր,
- հանդիպումների արձանագրություններ,
- եզրակացություններ (նյութերի փորձարկումների, կառույցների և այլնի մասին),
- նամակներ,
- ԱԾՑ-ի հոդվածների և գծագրերի վրա ցույց տրված ծավալների համապատասխանության ցուցակ,
- ԱԾՑ-ի հոդվածների և շուկայական գների համապատասխանության ցուցակ,
- տնտեսական արդյունավետության հիմնավորումներ,
- նախագծման ընթացքում պատրաստված այլ նյութեր:

### 3.4.8. II փուլի ավարտը և ներկայացվելիք նյութերը

Այն ավարտվում է, երբ Խորհրդատուն Պատվիրատուին է ներկայացնում փորձաքննության կողմից հաստատված (այդ թվում պետական փորձաքննությունը և անհրաժեշտության դեպքում՝ բնապահպանական փորձաքննությունը) Մանրամասն նախագիծ՝ ճարտարագիտական նախահաշիվները, բնապահպանական և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրական փորձաքննական այլ եզրակացություն/ները:

Խորհրդատուն վերը թվարկած հաշվետվությունների մշակման աշխատանքների, ինչպես նաև պահանջվող համաձայնեցումների և թույլտվությունների ստացման ընթացքի վերաբերյալ Պատվիրատուին պետք է ներկայացնի ամենամսյա միջանկյալ հաշվետվություններ: Փորձաքննության կողմից Մանրամասն մրցութային փաթեթի դիտարկման և հաստատման համար անհրաժեշտ ժամանակը, այդ թվում անհրաժեշտ փոփոխությունների և ուղղումների կատարման համար (ներառյալ քաղաքաշինական փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից արված դիտողությունները), պետք է ներառվի նախագծման ընդհանուր տևողության մեջ: Փորձաքննության ծառայությունների ծախսերը պետք է հոգա Խորհրդատուն և նախատեսի դրանք իր ֆինանսական առաջարկի մեջ, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծախսերի Խորհրդատուն պետք է նախագծման վերջնաժամկետից 10 աշխատանքային օր առաջ Պատվիրատուին ներկայացնի վերոհիշյալ փաստաթղթերի երկու օրինակ՝ դիտարկման, ուղղումներ անելու և հաստատման համար:

Խորհրդատուն Պատվիրատուին պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

1. Մրցութային փաստաթղթերը, որը բաղկացած է հետևյալ նյութերից.

- Գծագրեր,

- Տեխնիկական մասնագրեր,
- Աշխատանքների ծավալների ցուցակ,
- ՆԳՀ-ի փաթեթը, բնապահպանական դրական փորձաքննական եզրակացությունը և ՎԳՊ (անհրաժեշտության դեպքում), բոլոր անհրաժեշտ թույլտվություններով և համաձայնություններով:

2. Հավելվածներ.

- Ճարտարագիտական նախահաշիվներ,
- Ընդհանուր հավելվածներ:

***Խորհրդատուն պետք է պատրաստի առանձին մրցութային փաստաթղթեր, որի կազմը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ, կազմվում է նաև առանձին նախահաշիվ: Մրցութային փաստաթղթերը (և նախահաշիվը) ներկայացվում է փորձաքննության հաստատմանը և ստանում է փորձագիտական եզրակացություն:***

**3.5. ՓՈՒԼ III. Հեղինակային հսկողություն.**

Խորհրդատուն պարտավոր է պատշաճ և ժամանակին իրականացնել հեղինակային (նախագծողի) հսկողություն ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ ապահովելու շինարարական աշխատանքների համապատասխանությունը աշխատանքային նախագծին:

Հեղինակային հսկողություն իրականացնելիս Խորհրդատուն պարտավոր է՝

1. շինարարությունը սկսելուց առաջ՝ Պատվիրատուի, Տեխնիկական հսկողության ծառայությունները մատուցող և շինարարական աշխատանքները կատարող Կապալառուի հետ համատեղ կատարել գեոդեզիական, բնապահպանական, սոցիալական ուսումնասիրություն (երթուղիներով շրջելը ներառյալ) նախագծի համապատասխանությունը որոշելու և/կամ լուծման կարիք ունեցող ցանկացած խնդիր ի հայտ բերելու համար,
2. հետևել շինարարական աշխատանքների իրականացմանը՝ ստուգելու դրանց համապատասխանությունը աշխատանքային նախագծի և նախագծային լուծումների պահանջներին, պատվիրատուի հետ համաձայնեցված ողջամիտ ժամանակահատվածում լուծում տալ շինարարության ընթացքում առաջացած կամ թերի նախագծային մշակումների հետևանքով ի հայտ եկած ցանկացած խնդրի, կարծիք ներկայացնել Կապալառուի առաջարկությունների վերաբերյալ,
3. գրանցել նախագծային լուծումից որևէ շեղում և անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին բոլոր նման դեպքերի մասին,
4. իր հաշվին շտկել շինարարության ընթացքում ի հայտ եկած նախագծային թերությունները և բացթողումները,
5. մասնակցել Պատվիրատուի կողմից պահանջած ցանկացած հարցի քննարկմանը: Բացի դրանից, Պատվիրատուի պահանջով Խորհրդատուն պետք է մասնակցի բոլոր հանձնաժողովների աշխատանքներին (այդ թվում

ընդունող հանձնաժողովի) և ստորագրել ծրագրի «Ըստ էության ավարտման» և «Վերջնական ավարտման» վկայագրերը:

6. այցելել օբյեկտ(ներ) առնվազն ամիսը մեկ անգամ, մասնակցել բոլոր հանդիպումներին՝ Պատվիրատուի կողմից նշանակած օրը և ժամին, անհապաղ այցելել շինարարական հրապարակ(ներ)՝ Պատվիրատուի կողմից հատուկ պահանջի դեպքում:
7. ներկայացնել Պատվիրատուին ամսական հաշվետվություններ Հեղինակային հսկողության աշխատանքների և դաշտային այցելությունների մասին:

Կապալառուի կողմից ներկայացված հիմնավոր առաջարկությունները պետք է քննարկվեն ու հաստատվեն կամ մերժվեն Խորհրդատուի կողմից Պատվիրատուի անմիջական մասնակցությամբ: Այս աշխատանքների ծախսերը պետք է ներառված լինեն Խորհրդատուի ֆինանսական առաջարկում:

***Պատվիրատուի պահանջով Խորհրդատուն պետք է փոխանցի Հեղինակային հսկողության ծառայությունների մատուցումը Պատվիրատուի նշած կազմակերպությանը, որի պարագայում Խորհրդատուի ֆինանսական առաջարկում Հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման ծախսերը չեն վճարվելու:***

## 4. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

*I փուլում Խորհրդատուն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.*

1. Մանրամասն աշխատանքային պլան՝ ըստ շինարարական աշխատանքների իրականացման փուլերի;
2. Նախնական պայմանավորվածություններ, կապված հանքերի և այլնի հետ (առկայությունը, գտնվելու վայրը), համաձայնությունները և թույլտվությունները ***ներառյալ նախագծման թույլտվությունները (կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքները***);
3. Կառուցվող կամ վերակառուցվող համակարգերին առնչվող այլընտրանքային տեխնիկական լուծումներ, այդ թվում շինարարական աշխատանքների ծախսերի հաշվարկը և նախնական պլանավորումը, տնտեսական վերլուծությունը;
4. Մեկամսյա պարբերությամբ միջանկյալ հաշվետվություններ՝ հավաքագրված ելակետային բնապահպանական և սոցիալական տվյալների, ինչպես նաև կատարված ուսումնասիրությունների և դաշտային աշխատանքների վերաբերյալ և վերջնական բնապահպանական ու սոցիալական հաշվետվության նախագիծ այս փուլի աշխատանքների ավարտի ժամկետից երկու շաբաթ առաջ: Վերջնական հաշվետվության նախագիծն 10 օրյա ժամկետում կուսումնասիրվի Պատվիրատուի կողմից և անհրաժեշտության դեպքում կուղարկվի Խորհրդատուին լրամշակման: Խորհրդատուն 5 օրյա ժամկետում կամփոփի և կլրամշակի վերջնական հաշվետվության նախագիծը և այս փուլի ավարտին կներկայացնի

բնապահպանական և սոցիալական ուսումնասիրման վերջնական հաշվետվությունը;

5. Բնապահպանական փորձաքննության ներկայացվող Նախնական գնահատման հայտի փաթեթը՝ կազմված ՇՄՍԱԳ և փորձաքննության մասին ՀՀ օրենքին համապատասխան,
6. Նախնական նախագծերի քննարկում, ժողովների արձանագրությունների պատրաստում և անհրաժեշտ ուղղումների կատարում՝ նախնական նախագծի վերջնաժամկետից առնվազն 25 օր առաջ:
7. Նախնական նախագծերի վերջնական հաշվետվություն՝ նախնական նախագծի վերջնաժամկետից առնվազն 15 օր առաջ:

***I փուլի բոլոր նյութերը պետք է ներկայացվեն Պատվիրատուին 2 օրինակ անգլերեն և հայերեն լեզուներով: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն նաև էլեկտրոնային եղանակով՝ CD ROM սկավառակներով:***

***II փուլում Խորհրդատուն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.***

1) Մրցութային փաստաթղթերը, որոնք բաղկացած են հետևյալ նյութերից.

- Գծագրեր – 4 օրինակ (3 օրինակ հայերեն և 1 օրինակ՝ անգլերեն),
- Տեխնիկական մասնագրեր - 4 օրինակ (3 օրինակ հայերեն և 1 օրինակ՝ անգլերեն),
- Աշխատանքի ծավալների ցուցակ – 4 օրինակ (3 օրինակ հայերեն և 1 օրինակ՝ անգլերեն):
- Բնապահպանական փորձաքննության ներկայացվող Նախնական գնահատման հայտի փաթեթի վերջնական տարբերակը, փորձաքննության արդյունքում ակնկալվող դրական եզրակացությունները, պահանջվող համաձայնեցումներն ու թույլտվությունները: Վերջնական ՎԳՊ-ն (առկայության դեպքում) Խորհրդատուն պետք է Պատվիրատուին ներկայացնի 4 օրինակով (1 օրինակ անգլերեն և 3 օրինակ հայերեն):

2) Հավելվածներ.

- Ճարտարագիտական նախահաշիվներ - 2 օրինակ (հայերեն)
- Ընդհանուր հավելվածներ - 3 օրինակ (հայերեն)

Մրցութային փաստաթղթերը յուրաքանչյուր փաթեթի համար պետք է ներկայացվեն նկար PDF-ֆորմատով՝ հետագա տպագրության համար, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ՝ գծագրերը AutoCAD ծրագրով, տեքստային մասերը՝ Microsoft Word-ով, աշխատանքների ծավալների ցուցակը և մյուս հաշվարկները՝ Excel-ով:

- ***Փուլ I –ի տևողությունը՝ օրացուցային 100 օր պայմանագիրը ստորագրելուց հետո:***
- ***Փուլ II –ի տևողությունը՝ օրացուցային 65 օր Փուլ I –ի ավարտից հետո:***

*II փուլի բոլոր նյութերը պետք է ներկայացվեն Պատվիրատուին նաև էլեկտրոնային եղանակով՝ CD ROM սկավառակներով:*

**III փուլում Խորհրդատուն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը**

Առաջընթացի հաշվետվություններ Հեղինակային հսկողության ծառայության և դաշտային այցելությունների արդյունքների վերաբերյալ՝ շինարարական աշխատանքների յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո առաջին շաբաթվա ընթացքում – 2 օրինակ (1-ական անգլերեն և հայերեն):
Ավարտման հաշվետվություն՝ նորակառույց կառուցվածքների ընդունումից հետո – 3 օրինակ (1-ական անգլերեն և 2-ական հայերեն):

Հեղինակային հսկողությունն իրականացվելու է շինարարական աշխատանքների ողջ ընթացքում՝ սկսած նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև օբյեկտի հանձնումը շահագործման:

## 5. ԽՈՐՀՐԴԱՏՈՒ/ՆԵՐԻՆ ԿԱՐՃ ՑՈՒՑԱԿ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են՝

(i) ընկերության ընդհանուր փորձը (գործունեության հիմնական տեսակը և փորձը տարիներով),

(ii) հանձնարարության ոլորտում ընկերության փորձը (փորձը ոլորտում (տարիներ) և վերջին 10 տարիների ընթացքում իրականացրած համանման աշխատանքների թիվը),

(iii) ընկերության տեխնիկական և կառավարչական կարողությունները (կառավարչական և կազմակերպական կառուցվածք, գրասենյակային սարքավորումներ և այլն),

(iv) ընկերության փորձը տարածաշրջանում (Հայաստան/ԱՊՀ երկրներ),

(v) ընկերության միջազգային փորձը՝ տարածաշրջանից (Հայաստան/ԱՊՀ երկրներից) դուրս, այլ երկրներում:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության (ՀՁ) կամ ենթախորհրդատվության ձևով իրենց որակավորումներն ուժեղացնելու նպատակով (անհրաժեշտ է հստակ նշել միավորման կարգավիճակը, օրինակ՝ <Համատեղ ձեռնարկում> (ՀՁ) կամ <Ենթախորհրդատու>): Համատեղ ձեռնարկության դեպքում պահանջվում է կցել (i) լիազորագիր յուրաքանչյուր անդամի կողմից ներկայացուցիչ նշանակելու համար, (ii) լիազորագիր առաջատար անդամի ներկայացուցչի անունով՝ բոլոր անդամների անունից հանդես գալու համար և (iii) ՀՁ կազմելու <Մտադրության նամակը> կամ գոյություն ունեցող համաձայնագրի պատճենը: Պայմանագրի շնորհման դեպքում բոլոր անդամները համապարտ պատասխանատվություն են կրում Պատվիրատուի առջև Պայմանագրի բոլոր պարտավորությունների համար:

## 6. ԹԻՄԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Խորհրդատուն պետք է պատասխանատու լինի ադմինիստրատիվ կառավարման, գնումների, նախագծման, վերահսկողության, նմանատիպ շինարարությունների իրականացման ոլորտներում փորձառու որակյալ ինժեներների, տեխնիկների և այլ մասնագիտական անձնակազմի հավաքագրման և նմանատիպ կլիմայական և աշխարհագրական պայմաններում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման համար:

Նախատեսվում է, որ Խորհրդատուի թիմը պետք է ներառի հետևյալ մասնագետներին.

- Ծրագրի ղեկավար,
- Ինժեներ – հիդրոտեխնիկ-նախագծող,
- Ոռոգման և/կամ մելիորացիայի մասնագետ,
- Բնահողերի մեխանիկայի մասնագետ,
- Ոռոգման կառուցվածքների/ջրային համակարգերի շահագործման մասնագետ,
- Երկրաբան և/կամ հիդրոերկրաբան,
- Ֆինանսական/Վճարման մասնագետ, տնտեսագետ
- Ինժեներ-էլեկտրիկ,
- Ինժեներ - հիդրոլոգ,
- Ինժեներ - կոնստրուկտոր,
- Աշխատանքի կազմակերպման մասնագետ,
- Բնապահպանության մասնագետ,
- Սոցիալական և վերաբնակեցման հարցերի մասնագետ:

Բոլոր մասնագետները պետք է ունենան նմանատիպ պաշտոններում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև.

- ծրագրի իրականացման գոտուն նման կլիմայական պայմաններում ձեռքբերված նախագծման և ծրագրի կառավարման փորձ,
- ծրագրի իրականացման գոտուն նման կլիմայական պայմաններում ձեռքբերված շինարարական և ծառայությունների մատուցման փորձ,
- ոռոգման ջրի ամբարման  ծրագրերի նախագծման փորձ,
- պլանավորման և նախագծման գործառնությունների, պլանավորման և նախագծման գործառնություններին աջակցման, ծրագրի կառավարման, ծրագրի կառավարմանը աջակցության, ինժեներության, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրականացման փորձ,
- շինարարական, ֆինանսական, հաշվապահական և վճարման ոլորտների Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների լավ իմացություն,
- Միջազգային դոնոր/ֆինանսական հաստատությունների ֆինանսավորմամբ իրականացված նմանատիպ աշխատանքներում ներգրավվածություն և այդ հաստատությունների գործառնական քաղաքականությունների լավ իմացություն և կիրառման փորձ:

Անհրաժեշտության դեպքում Խորհրդատուն պետք է պատրաստ լինի լրացնելու իր կազմը լրացուցիչ մասնագետներով, իր հաշվին և ըստ մասնագետների անհրաժեշտության, համաձայնեցնելով թեկնածությունը Պատվիրատուի հետ:

1) **Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները)**

**Նախատեսված աշխատանքների կատարման համար մասնակիցներից պահանջվող Լիցենզիա՝**

<Լիցենզավորման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննությունների եզրակացությունների տրամադրման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է, որ մասնակիցն ունենա Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում՝

- <**Հիդրոտեխնիկական օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հիդրոտեխնիկական կառույցներ և համակարգեր**> լիցենզիա:

## 7. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԸ

Խորհրդատուի պարտականությունների մեջ մտնում է բոլոր հարցերով սերտ կապերի պահմանումը Պատվիրատուի հետ: Աշխատանքի հետ առնչվող ողջ պաշտոնական նամակագրությունն ուղարկվելու է Պատվիրատուին:

Պատվիրատուն անվճար կտրամադրի ընտրված Խորհրդատուին գոյություն ունեցող ամբողջ տեղեկատվությունը, տվյալները, հաշվետվությունները և քարտեզները՝ որքանով դրանք կլինեն մատչելի և հնարավորին չափով կաջակցի Խորհրդատուին ստանալ առնչություն ունեցող մնացած տվյալները կառավարական հաստատություններից և պետական մարմիններից: Սակայն Խորհրդատուի պարտականությունն է ստուգել այդ տեղեկատվության որակը և պիտանիությունը: Վերոնշյալ տեղեկատվությունը, տվյալները, հաշվետվությունները և մնացած փաստաթղթերը Խորհրդատուի համար մատչելի կլինեն առաջարկվող ծառայությունների ողջ իրականացման ընթացքում:

**Կատարողը պետք է՝**

- Իրականացնի մանրամասն հետազոտություններ (Ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով) և կազմի նախագիծ ՀՀ-ում գործող շինարարական նորմերին համապատասխան:
- Կազմված նախագիծը համաձայնեցնի բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:
- Սահմանված կարգով փորձաքննության անցկացման արդյունքում, դիտողությունների առկայության դեպքում, կատարել ուղղումներ և լրամշակումներ՝ հաշվի առնելու փորձաքննության կողմից տրված դիտողությունները:
- շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրություն:

- ներկայացնի կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, կատարվող աշխատանքների երաշխիքային ժամկետները:
- ներկայացնի աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,
- պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
- Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրություն:

**Փաստաթղթեր.**

1) Մրցութային փաստաթղթերը, որոնք բաղկացած են հետևյալ նյութերից.

- Գծագրեր – 4 օրինակ (3 օրինակ հայերեն և 1 օրինակ՝ անգլերեն),
- Տեխնիկական մասնագրեր - 4 օրինակ (3 օրինակ հայերեն և 1 օրինակ՝ ռուսերեն և անգլերեն),
- Աշխատանքի ծավալների ցուցակ – 4 օրինակ (3 օրինակ հայերեն և 1 օրինակ՝ ռուսերեն և անգլերեն):
- Բնապահպանական փորձաքննության ներկայացվող Նախնական գնահատման հայտի փաթեթի վերջնական տարբերակը, փորձաքննության արդյունքում ակնկալվող դրական եզրակացությունները, պահանջվող համաձայնեցումներն ու թույլտվությունները: Վերջնական ՎԳՊ-ն (առկայության դեպքում) Խորհրդատուն պետք է Պատվիրատուին ներկայացնի 4 օրինակով (1 օրինակ ռուսերեն և անգլերեն, 3 օրինակ հայերեն):

2) Հավելվածներ.

- Ճարտարագիտական նախահաշիվներ - 2 օրինակ (հայերեն), 1 օրինակ ռուսերեն
- Ընդհանուր հավելվածներ - 3 օրինակ (հայերեն), 1 օրինակ ռուսերեն

Մրցութային փաստաթղթերը յուրաքանչյուր փաթեթի համար պետք է ներկայացվեն նկար PDF-ֆորմատով՝ հետագա տպագրության համար, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով՝ գծագրերը AutoCAD ծրագրով, տեքստային մասերը՝ Microsoft Word-ով, աշխատանքների ծավալների ցուցակը և մյուս հաշվարկները՝ Excel-ով:

Նախագծային աշխատանքների տևողությունը՝ 165 օրացուցային օր( Փուլ I- 100օր և փուլ II -65օր):
ՆՇՈՒՄ. Կատարողը, առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության, չի կարող սեփականացնել, օգտագործել կամ հրապարակայնորեն տարածել հիշյալ աշխատանքների փաստաթղթերը:
Նշված աշխատանքների իրականացման նախահաշվային արժեքն իր մեջ ներառում է բոլոր տեսակի ծախսերը (հարկեր, տուրքեր, շահույթ և այլն):

**Նախագծին ներկայացվող պահանջներ**

1.1 Նախագծանախահաշվային փաստաթղթերը իրենց լուծումներով պետք է համապատասխանեն ՀՀ շինարարական նորմերին:

1.2 Նախագծերը պետք է համապատասխանեն ՀՀ բնապահպանական նորմերին:

**Ծանոթություն.**

նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուժանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուժանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արագածոտնի մարզ, Աշտարակ խոշորացված համայնք
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 394 «10» 11 2022 թ.

Օբյեկտ՝ Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի Արուճի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 10 հազ.խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգում
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

IV կարգի հիդրոտեխնիկական կառուցվածքի նախագծային փաստաթղթերի մշակման համար։
ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը՝ Արագածոտնի մարզ, Աշտարակ խոշորացված համայնք
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային Կոմիտե
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը ____________
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը

Առաջադրանքի գործողության ժամկետը՝ ____________
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է Արագածոտնի մարզ, Աշտարակ խոշորացված համայնք
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը ____________
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը ____________
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — <u>*Առկա են տրանսպորտների մուտեցման ճանապարհներ*</u>

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) — Նախագծվող տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների տեղադիրքը և ազդեցությունը կհստակեցվի մանրամասն նախագծման ընթացքում

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր — __________

(կից հողօգտագործումների անվանումը և դրանցսահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) — __________

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ — <u>Համաձայն գործող նորմերի</u>

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ — <u>Համաձայն քաղաքաշինական ծրագրային դրույթների</u>

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) — __________

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) — __________

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) — __________

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) — __________

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անշրանցիկ) տարածքի — __________

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ ____________________

19. Շրջակա միջավայրի պահպանում — Համաձայն ՇՄԱԳ-ի պահանջների

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում — Համաձայն քաղաքաշինական ծրագրային դրույթների և ծրագրի պահանջների

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — Համաձայն ԽՕԴ-ի առաջադրանքի պայմանների

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — Համաձայն ԽՕԴ-ի առաջադրանքի պայմանների

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում — Համաձայն ԽՕԴ-ի առաջադրանքի պայմանների

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ — Համաձայն ԽՕԴ-ի առաջադրանքի պայմանների

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում — Համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում — Չի Պահանջվում

27. Այլ պայմաններ — Չի Պահանջվում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ
ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

[illegible]

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

**Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի ՆՇ 369+30 hատվածում գտնվող՝ Արուճի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 10,0 հազ.խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար կառույցի առկա վիճակի ուսումնասիրման և թերությունների փաստագրման**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1-1*

**08.09.2022թ.**

Հանձնախմբի կազմը.

**Պողոսյան Հայսեր** – «Մոդուլ» ՍՊԸ, նախագծային խմբի ղեկավար, տ.գ.թ., դոցենտ
**Զազյան Ջեմմա** – «Մոդուլ» ՍՊԸ, ինժեներ-հիդրոտեխնիկ
**Մովսիսյան Գևորգ** – «Մոդուլ» ՍՊԸ, ինժեներ-գեոդեզիստ
**Հովհաննիսյան Դավիթ** – «Արագածոտն» ՋՕԸ գլխավոր ինժեներ
**Գրիգորյան Արշակ** – «Արագածոտն» ՋՕԸ, իրացման բաժնի պետ

